ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 մարտի 2025 թվականի N 140 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 130-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 21.02.2025 թվականի թիվ 64 և «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 25.02.2025 թվականի թիվ 49/25 գրությունները.

ո ր ո շ ում ե մ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական չափը, լրավճարների չափաքանակները, վճարման պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 14-ի N 15-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 130-Ա որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակում 3-րդ տողի երրորդ սյունակի «565000» թիվը փոխարինել «800000» թվով, իսկ 5-րդ տողի 3-րդ սյունակի «450000» թիվը «900000» թվով:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ